ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE

BATI ERMENISTAN
HUKUMETI

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Ֆրանսիայի Արտաքին Գործերի Նախարարին

Փարիզ, Ֆրանսիա, 25.01.2012 թ.

Հարգելի Պարոն Ալեն Ժյուպե

Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում Ֆրանսիայի Սենատի կողմից ցեղասպանությունների ժխտումը քրեականացնելու մասին օրինագծի ընդունման կապակցությամբ եւ մեր շնորհակալական խոսքն ենք հղում բոլոր նրանց, ովքեր եւս մեկ քայլ կատարեցին դեպի արդարության ու ճշմարտության հաղթանակ:

Ընդունելով օրինագիծը՝ Ֆրանսիան ապացուցեց՝ չկա օտարի ցավ:

Այս օրենքն ընդհանրացնում եւ ամփոփում է պատմական այն բոլոր փաստաթղթերը, որոնք ընդունել է Ֆրանսիայի Հանրապետությունը վերջին հարյուր տարվա ընթացքում: Խորհրդարանի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենքը հույս է տալիս Արեւմտյան Հայաստանի բռնադատված հայ ժողովրդին:

Այս քայլով Ֆրանսիայի Հանրապետությունը հայ ժողովրդի իրավունքը վեր դասեց սեփական շահերից, համոզված ենք, այս պատմական քայլը խրախուսելու է Եվրոպական Միությանը եւ աշխարհի մյուս պետություններին:

Իրականում, օրինագծի ընդունմամբ էլ ավելի կամրապնդվի իրավունքը Եվրոպական Միության մեջ:

Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը կարեւոր իրավական մեխանիզմ է մարդկության եւ մարդկայնության դեմ կատարված հանցագործությունները ժխտողներին պատասխանատվության ենթարկելու:

Մենք լիահույս ենք, հեռու չէ այն օրը, երբ Թուրքիան՝ ինքը, կճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության
Արտաքին Գործերի Պատասխանատու՝
Արամ Մկրտչյան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ
stat.gov.wa@haybachdban.org